

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ

Փառք եւ գոհութիւն ամենակալին Աստուծոյ, որ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին կողմէ կատարուած Աստուածաշունչի սերտողութիւններուն առաջին բաժինը արդէն իսկ իր աւարտին հասած է: Գրասենեակը ուրախութիւնն ունի, ամփոփ տողերու մէջ, յայտնելու անցնող ամիսներու ընթացքին կատարուած Աստուածաշունչի սերտողութեան աշխատանքները:

Աշխատանքները սկսան Հոկտեմբեր 12, 2009-ին մինչեւ Մարտ 29, 2010, ամէն Երկուշաբթի առաւօտեան ժամը 10:00-11:00, Կլէմտէյի Ս. Պետրոս Եկեղեցւոյ մէջ, ինչպէս նաեւ ամէն Երկուշաբթի երեկոյեան ժամը 7:00-9:00, Առաջնորդարանէն ներս, Պըրպէնք: Այս տարուան սերտողութեան նիւթերն էին.-

1. Հայց. Առաք. Եկեղեցւոյ Սուրբ Պատարագի բացատրութիւնը, անդրադառնալով անոր բնագրային կառոյցին, մասերուն, զգեստներու գործածութեան եւ անոնց իմաստին:

2. Մեծ Պահքի բացատրութիւնը եւ անոր կարեւորութիւնը քրիստոնէայ հաւատացեալի կեանքին մէջ, անդրադառնալով հետեւեալին.-

Մեծ Պահքը ճանապարհ խոստովանութեան,
Մեծ Պահքը ճանապարհ բժշկութեան,
Մեծ Պահքը ճանապարհ զԱստուած ճանաչողութեան,
Մեծ Պահքը ճանապարհ մաքրութեան,
Մեծ Պահքը ճանապարհ վկայութեան,
Մեծ Պահքը ճանապարհ յաղթանակի ու յարութեան:

Ջատկուան փոքրիկ դադարէ մը ետք, աշխատանքները կը վերսկսին Ապրիլի 12-ին, նոյն ժամանակացոյցով, նոյն վայրերու մէջ, առաւել եւս Վէն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցւոյ մէջ, ամէն Չորեքշաբթի առաւօտեան ժամը 10:00-11:00, նիւթ ունենալով Յայտնութիւն Յովհաննու գիրքի «*Եօթը Եկեղեցիները եւ Մենք*» վերնագրով:

Սիրով հրաւիրուած են մեր ժողովուրդի զաւակները լսելու Աստուծոյ խօսքը, որ «*Լոյս է մեր շաւիղներուն եւ ճրագ մեր քայլերուն*»:

Մանրամասնութեանց համար դիմեցէք Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Գրասենեակ՝ հեռաձայնելով (818) 558-7474: